ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հովհաննես Գագիկի Դեմիրճյանի կողմից ներկայացված Ա.03.02 մասնագիտությամբ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի «Սև խոռոչների հետ կապված ինտեգրվող համակարգեր» թեմայով թեկնածուական ատենախոսության մասին:

Հ. Դեմիրճյանի ատենախոսությունը նվիրված է ժամանակակից տեսական ֆիզիկայի ամենակարևոր և արդիական բնագավառներին՝ գրավիտացիոն ալիքների և սև խոռոչների, ինչպես նաև դասական և քվանտային ինտեգրվող համակարգերի ուսումնասիրությանը:

Աշխատանքը նվիրված է երեք խնդիրների սիստեմատիկ ուսումնասիրմանը և վերլուծությանը.

1. Իմպուլսային գրավիտացիոն ալիքների հետևանքով գրավիտացիոն հիշողության երևույթի ուսումնասիրություն;
2. Հորիզոնի մոտակայքում էքստրեմալ Մայերս-Պերրի սև խոռոչների հետ կապված ինտեգրվող համակարգերի ուսումնասիրություն;
3. Որոշ քվանտ-մեխանիկական համակարգերի ու Կլեյն-Գորդոնի հավասարման լուծման միջև կապի հաստատում:

Թեզիսում դրված և լուծված բոլոր խնդիրները վերաբերում են ժամանակակից գրավիտացիոն տեսության և ինտեգրալային համակարգերի առավել արդիական հարցերին: Ստացված գիտական արդյունքները ու դրանց նորարարությանը օժանդակում են ժամանակակից մաթեմատիկական ֆիզիկայի ապարատի կիրառությանը: Հեղինակն այս աշխատանքը կատարել է քննարկվող բնագավառում բավարար հմտություն ունեցող համահեղինակների հետ: Դա ապահովում է ստացված արդյունքների հուսալիությունը, ինչը կարող է վստահելի ճանապարհ հարթել ապագա հետազոտությունների համար: Ստացված արդյունքները կարող են օգտագործվել բազմաթիվ խնդիրներում, մասնավորապես ինտեգրվող համակարգերի ֆիզիկայի մեջ:

Ատենախոսության մեջ առաջարկված նոր մոտեցումները հանդիսանում են խոստումնալից սկիզբ բարձր էներգիաների աստղաֆիզիկայի կարևոր խնդիրների լուծման համար: Մանավորապես, ապագայում շատ օգտակար կլինի ուսումնասիրել այլ դաշտերի, օրինակ Կլեյն-Գորդոնի կամ Դիրակի, ինտեգրելիությունը ատենախոսության մեջ քննարկած մետրիկայում:

Եզրակացություն՝

Ներկայացված ատենախոսությունը գիտական թեմայի առաջնահերթությամբ և ընդգրկունությամբ, ստացված հետազոտական արդյունքների կարևորությամբ, գիտական պնդումների հիմնավորմամբ, բավարարում է Հայաստանի Բարձրագույն Որակավորման Հանձնաժողովի կողմից՝ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի աստիճանի համար ներկայացրած բոլոր պահանջներին, իսկ Հովհաննես Գագիկի Դեմիրճյանը արժանի է Ա.03.02 դասիչով մասնագիտությամբ (աստղաֆիզիկա և ռադիոաստղագիտության) ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի աստիճանին: